ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՏԵՔՍՏԻԼԱՐՏ ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/21 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
8	Ստորև ներկայացված ապրանքները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. թիվ 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևերին (նկարներին) համապատասխան: Տարազաբաճկոն, առավելագույնը՝ 20 հատ (Ձև 6, Ձև 8): Կարվող կոշտ ուսադիրներով, որը պատրաստվում է մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ), բնական մետաքսե աստառով (8-C5-ВШ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100գ/մ2 խտությամբ), կտորի և աստառի միջև որակյալ ներդիրով (խոլոստով), իսկ օձիքը և թևածալքերն ունեն մուգ կարմիր եզրաշերտ՝ 2,5 մմ լայնությամբ (2581 արտիկուլի մահուդե կտորից): Արդարադատության լեյտենանտից մինչև կապիտանի կոչում ունեցող դատական կարգադրիչների համար միակոճկուն է՝ դատական կարգադրիչների ծառայության խորհրդանշանի պատկերով, 4 ոսկեգույն կոճակներով, մարմինը կիսագրկող հարթ մակերեսներով, հետծալված օձիքով և սովորական երկկարանի թևքերով: Տարազաբաճկոնը աջ և ձախ կողմերից ունենում է կափույրով ծածկվող կտրվածքով գրպաններ, իսկ ձախ մասում՝ կոճկվող ծոցագրպան (Ձև 6): Արդարադատության մայորից մինչև գնդապետի կոչում ունեցող դատական կարգադրիչների համար, որը երկփեղկանի և երեք կոճականի է, թիկնամասի ներքևում առանց կտրվածքի, իսկ օձիքի վրա ամրացվում է դատական կարգադրիչների ծառայության խորհրդանշանը (Ձև 6): Արդարադատության գեներալ-մայորի կոչում ունեցող դատական կարգադրիչների համար, որը կարվում է մուգ կապույտ գույնի գաբարդինից: Արդարադատության գեներալ-մայորի կոչում ունեցող դատական կարգադրիչների համար տոնական տարազաբաճկոնը կարվում է պողպատագույն գաբարդինից, իսկ օձիքը և թևածալքերն ունեն

	մուգ կարմիր եզրաշերտ՝ 2,5 մմ լայնությամբ: Օձիքի և թևածալքերի վրա ոսկեգույն թելով ասեղնագործված են կաղնու ճյուղեր (Ձև 8): Արդարադատության լեյտենանտից մինչև գնդապետի կոչում ունեցող դատական կարգադրիչների համար, որը կարվում է բնական մետաքսե աստառով, կտորի և աստառի միջև որակյալ ներդիրով (խոլոստով), իսկ օձիքը և թևածալքերն ունեն մուգ կարմիր եզրաշերտ՝ 2,5 մմ լայնությամբ: Թևածալքերի վրա առկա են երեք կոճակներ (Ձև 6): Կանացի, որը համապատասխանում է սույն տեխնիկական բնութագրով սահմանված նկարագրությանը, սակայն պատրաստվում է կրծքամասում սեղմոններով և կոճկվում է ձախ կողմից: Յուրաքանչյուր անգամ մատակարարվող ապրանքների համար մատակարարը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Կանացի և տղամարդու տարազաբաճկոնների քանակները՝ համաձայն ձևավորված պատվերի: Ապրանքների փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, պարկերի վրա պետք է նշված լինեն անվանումները ըստ վերցված անհատական չափսերի, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինեն տեսականու անվանումը, քանակը, չափսերը, խնամքի վերաբերյալ տեղեկատվությունը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ТЕКСТИЛАРТ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/21 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
8	Ниже представленные товары создаются в соответствии с критериями и формами (фотографии), утвержденными постановлением Правительства Республики Армения номер 1517-А от 20.12.2018г. Куртка (костюм), максимально 20 штук (Форма 6, Форма 8). Со шьюшимися твердыми погонами, изготавливается из темно-синей полушерстяной ткани (шерсть 67%, полиэстер 33%, плотностью 317 г/м2), с натуральной шелковой подкладкой (из артикула 8-С5-ВШ темно-синей ткани плотностью 100г/м2), с качественной прокладкой между тканью и подкладкой (с холостом), а воротник и манжеты имеют темно-красную тесьму шириной 2,5 мм (из суконной ткани 2581 артикула). Для судебных приставов, имеющих звание от лейтенанта до капитана юстиции – застегивается на одну пуговицу с изображением символа службы судебных приставов, с 4 золотистыми пуговицами, полуприлегающими гладкими поверхностями, с назад сложенным воротником и с обыкновенными двухшовными рукавами. Костюм с левой и правой стороны имеет карманы с разрезами, покрывающиеся клапанами, а в левой части застегивающийся внутренний карман (Форма 6). Для судебных приставов, имеющих звание от майора до полковника юстиции - двухслойный и с тремя пуговицами, внизу тыльной части без разреза, а на воротнике креплется символ службы судебных приставов (Форма 6). Для судебных приставов, имеющих звание генерала-майора юстиции – шьется из габардина темно-синего цвета. Для судебных приставов, имеющих звание генерала-майора юстиции праздничный костюм шьется из габардина стального цвета, а воротник и манжеты имеют темно-красную тесьму шириной 2,5 мм. На воротнике и манжетах золотистыми

	нитками вышиты ветки дуба (Форма 8). Для судебных приставов, имеющих звание от лейтенанта до полковника юстиции – шьется с натуральной шелковой подкладкой, качественной вкладкой между тканью и подкладкой (с холостом), а воротник и манжеты имеют темно красную тесьму шириной 2,5 мм. На манжетах есть три пуговицы (Форма 6). Женский, который соответствует описанию, установленному данной технической характеристикой, однако изготавливается с вытачками в части груди и застегивается с левой стороны. Каждый раз для поставляемых товаров поставщик должен представить выданное аккредитованной в РА организацией заключение лабораторного исследования о составе, категории, стабильности краски и поверхностной плотности ткани. Количества женских и мужских костюмов согласно оформленному заказу. Упаковка товаров в полиэтиленовых прозрачных пакетах, на пакетах должны быть отмечены наименования согласно взятым индивидуальным размерам, маркированные, на марках должны быть отмечены наименование, количество, размеры, информация об уходе ассортимента.